Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

ՅԱՎԱԼԻ ԱՆՀՇՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԵՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ակադեմիկոս Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» քարտեզը, կից բացատրությամբ և բնագրով, որ լույս տեսավ 1963-ին, անշուշտ, պատմագիտական-աշխարհագրական կարևոր աշխատություն է։ Նպատակ չունենալով տալ տարիների գիտական լուրջ աշխատանքի արդյունք հանդիսացող այդ ուսումնասիրության գնահատականը անհրաժեշտ համարեցինք մեր ուժերի ներածին չափով անդրադառնալ միայն մի հարցի՝ պատմական իրողության անտեսման մի փաստի, որ, ցավոք, տեղ է գտել այդ քարտեզի մեջ։

Ակադեմիկոս Երեմյանը ուսումնասիրելով Մովսես Խորենացուն (ապա նաև Անանիա Շիրակացուն) վերագրվող «Աշխարհացույց»-ը, այն եզրակացության է եկել, որ «Աշխարհացույց»-ի մեզ հասած բնագիրը անցյալում գոյություն ունեցող և հետագայում անհետացած քարտեզների նկարագրություն է, այդ քարտեզներին կից բացատրությունը։ Ըստ Երեմյանի, գոյություն են ունեցել 15 քարտեզներ իրենց նկարագրություններով. վերջիններից պահպանվել են 10-ը և մեզ հասել «Աշխարհացույց» անունով։ Մեծ Հայքը պատկերողը ընկ. Երեմյանը համարում է կորած քարտեզներից 7-րդը, որը և նա նպատակ է դրել վերակազմել, ինչպես ինքն է գրում, «ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա»։

Այլ խոսքով ասած ակադեմիկոս Երեմյանը փորձ է արել քարտեզի վերածելու «Աշխարհացույց»-ի այն մասը, ուր նկարագրված է Մեծ Հայք երկրամասը։ Այստեղից էլ նոր քարտեզի նկատմամբ հիմնական պահանջը՝ լիովին հավատարիմ մնալ վերականգնվող պատմական վավերագրին՝ «Աշխարհացույց»-ին։

Պետք է ասել, որ «Աշխարհացույց»-ի մեջ Մեծ Հայքը նկարագրված է բավական որոշակի։ Այնտեղ թվարկվում են այն 15 փոքր աշխարհները[1], որոնք միասին բաղադրել են Մեծ Հայք երկիրը, տրվում են այդ երկրի սահմանները, նրա ֆիզիկական, կենդանաբանական, բուսաբանական աշխարհագրությունը և այլն։

Ըստ ակադեմիկոս Երեմյանի, «Աշխարհացույց»-ը գրվել է 7-րդ դարի սկզբին կամ 6-րդի վերջին։ Այս կարծիքը կարող է ընդունվել շատերի կողմից, կլինեն նաև մերժողներ, բայց ամեն դեպքում անտարակույս է ու անառարկելի. մի հանգամանք, որ անկախ այն բանից, թե ո՛ր դարում կամ ո՛ր թվականին է գրվել «Աշխարհացույց»-ը, այնտեղ Մեծ Հայքի ընդհանուր նկարագիրը տրված է այնպես, ինչպես այդ երկիրը հասկացվել է «Աշխարհացույց»-ը գրվելու ժամանակ։ Այլ կերպ ասած, անկախ այն բանից, թե երբ է ապրել «Աշխարհացույց»-ի հեղինակը, նա Մեծ Հայքը տվել է իր ժամանակի ըմբռնումով կամ իր ըմբռնումով, այսինքն՝ Մեծ Հայքի անվան տակ նա նկարագրել է այն երկրամասը, որը իր օրոք, իր կարծիքով այդ անունն էր կրում։ Ուրիշ կերպ էլ չէր կարող վարվել մի հեղինակ, որ ժամանակակից աշխարհագրություն էր գրում։

Այս ճշմարտությունը մինչև օրս ինքնըստինքյան հասկանալի է եղել բոլորի համար։

Բայց ահա իր աշխատության ներածության մեջ այս ճշմարտության դեմ չառարկելով՝ ակադեմիկոս Երեմյանը այն ամբողջովին մերժել է իր կազմած քարտեզում։ Սակայն նախքան քարտեզին անցնելը ասենք նաև, որ անկախ այն բանից, թե ստույգ ո՛ր դարի ո՛ր կեսում կամ քառորդում է ապրել «Աշխարհացույց»-ի հեղինակը. անտարակույս է նաև մի այլ հանգամանք, որ ամեն դեպքում նա ապրել է հայկական ինքնուրույն կենտրոնական պետականության կորուստից հետո, պարսից մարզպանության շրջանում։ Իսկ այս փաստից էլ բխում է այն պարզ ճշմարտությունը, որ Մեծ Հայքը «Աշխարհացույց»-ի մեջ կարող էր բերվել որպես զուտ աշխարհագրական-էթնիկական երկրամաս, և ոչ որպես Հայաստան պետություն, քաղաքական անկախ միավոր, ու

---

1 Որոշ ձեռագրերում՝ 16 աշխարհներ։

այն ժամանակներում գոյություն չուներ2: Պետք է նկատի ունենալ նաև, որ «Աշխարհացույց»-ի մեջ Մեծ Հայքը իր 15 փոքր աշխարհներով ներկայացված է այնպես, ինչպես այն ըմբռնվել է մի շարք դարերի ընթացքում և «Աշխարհացույց»-ը դրվելուց առաջ, և նրանից շատ հետո։ Այլ խոսքով ասած, դա, եթե կարելի է ասել, Հայաստանն է, նրա հիմնական մասը առհասարակ, աշխարհագրական-էթնիկական առումով, անկախ այն բանից, թե ո՛ր ոարում քաղաքական ուժերի հարաբերակցությունը ինչպիսի վարչական կամ քաղաքական սահմաններ է անցկացրել այդ երկրի վրայով կամ պետական ինչ միավորներ են եղել այդ հողամասի վրա:

Ահա այս ճշմարտությունն է անտեսված նշված քարտեզում։ Քարտեզագիրը հաշվի չի առել «Աշխարհացույց»-ի մեջ Մեծ Հայքի աշխարհագրական-էթնիկական ըմբռնումը ու բոլորովին նոր ու խորթ իմաստ է տվել նրան և ահա թե ինչպես։

«Աշխարհացույց»-ում հանգամանորեն նկարագրված Մեծ Հայքը իր 15 աշխարհներով ակադեմիկոս Երեմյանի քարտեզի մեջ առանձնացված է բաց ու մուգ կարմիր գույներից և սև կետագծերից բաղկացած սահմանագծով։ Քարտեզի վերևում «Սահմաններ» վերնագրի տակ Մեծ Հայքի այդ սահմանը Երեմյանը բացատրում է այսպես՝ «Մեծ Հայրի՝ մինչև 387 թվականը», որ նշանակում է միայն մի բան, թե «Աշխարհացույց»-ում նկարագրված Մեծ Հայք երկրամասը իր 15 աշխարհներով Մեծ Հայք է համարվել սոսկ մինչև 387 թվականը: Իսկ քանի որ խոսքը վերաբերում է վերականգնվող մի հին քարտեզի, ապա սա նշանակում է, թե իբր «Աշխարհացույց»-ի հեղինակը նկարագրել է մի «Մեծ Հայք», որ եղել է ոչ թե իր ժամանակ, այլ մինչև 387 թիվը։

Այդպիսով, ակադեմիկոս Երեմյանը մի կողմից «Աշխարհացույց»-ի հեղինակին համարում է 7-րդ դարի և ասում, որ՛ ինքը Մեծ Հայքի սահմանները որոշում է ըստ 7-րդ դարի այդ հեղինակի նկարագրության (նույնիսկ վերնագրի մեջ էլ այդ շեշտում է), իսկ մյուս կողմից այդ նույն հեղինակի նշած սահմանները որակում է որպես մինչև 387 թվականի սահմաններ։

Սա ոչ միայն ակնհայտ հակասություն է, այլև պատմական իրողության շատ լուրջ անտեսում։

Ողջ «Աշխարհացույց»-ում ակնարկ անգամ չկա այն մասին, թե այնտեղ նկարագրված է Մեծ Հայք մինչև այսինչ ժամանակը կամ թվականը։ «Աշխարհացույց»-ի հեղինակը, կրկնում ենք, ուղղակի նկարագրում է իր և ժամանակակիցների ըմբռնմամբ Մեծ Հայքը, նկարագրում է իբրև իր ժամանակ գոյություն ունեցող մի երկիր և նկարագրում է շատ հստակ ու որոշակի։ Ահա այդ նկարագրությունը (ըստ կազմողի օգտագործած բնագրի). «Եւ ունի Մեծ Հայք փոքր աշխարհս հնգետասան, որք են այսոքիկ.

Առաջին աշխարհ Բարձր Հայք, այսինքն՝ Կարնոյ կողմն, երկրորդ աշխարհ՝ Չորրորդ Հայք, այսինքն (Մոփաց կողմն), երրորդ՝ Աղձնիք առ Տիգրիս գետով. չորրորդ՝ Տա(ւ)րուբերան, որ է Տարաւն. հինգերորդ՝ Մոկք. վեցերորդ աշխարհ՝ Կորճայք, որ առ Ասորեստանեաւ. եաթներորդ աշխարհ՝ Պարսկահայք, որ առ Ատրպատականիւք. ութերորդ աշխարհ՝ Վասպուրական, որ ըստ մտից հիւսիսոյ Նորա է. իններորդ աշխարհ՝ Սիւնիք որ առ Երասխաւ, տասներորդ (աշխարհ)՝ Արցախ, որ յերի Նորա կայ. մետասաներորդ աշխարհ՝ Փայտակարան (համանուն) քաղաքով. որ առ եզերբն Կասրից ծովուն, ի մուտս Երասխայ. երկոտասաներորդ աշխարհ՝ Ուտէացւոց, որ առ Աղուանիւք եւ Կուր գետով. երեքտասաներորդ աշխարհ՝ Գուգարք՝ որ առ Վրօք. չորեքտասաներորդ աշխարհ՝ Տայք, որ առ Եգերբ. հնգետասաներորդ աշխարհ՝ Այրարատ, ի մէջ նոցա»։

Ահա այսպիսի որոշակիությամբ է «Աշխարհացույց»-ի հեղինակն ասում, թե իր ժամանակ ինչ է հասկացվել Մեծ Հայրի տակ, ինչպիսի 15 փոքր աշխարհների գումարն էր կոչվում այդ անունով։ Հեղինակը խոսում է ներկայով («Եւ ունի Մեծ Հայք»), որ նշանակում է, թե որևէ 387-ի կամ մի այլ անցած ժամկետի հարց չկա, խոսքը հեղինակի ապրած ժամանակին է վերաբերում։

Ակադեմիկոս Երեմյանը բերված այս քաղվածքը համարում է 7-րդ դարում (կամ 6-րդի վերջում) գրված, բայց առանց հիմնավորման Մեծ Հայքի այնտեղ եղած ըմբռնումը համարում է մինչև 387 թվականը գոյություն ունեցած3։

---

2 Պարսից մարզպանության շրջանում, ինչպես հայտնի է, հայկական մարզը, որ պարսից հյուսիսային քուստակի մի հատվածն էր՝ զբաղեցնելով Մեծ Հայքի մի մասը, որոշ ինքնավարություն ուներ։ Մեծ Հայքի մյուս մասերը, որ մտցված էին Բյուզանդիայի և պարսից այլ մարզերի մեջ, մեծ մասամբ ունեին իրենց հայ նախարարները և նույնպես օգտվում էին որոշ ինքնավարությունից։ Սակայն հայկական պետություն չկար, այն միայն երազանք էր, ձգտում, որ ապրում էր հայրենասերների սրտի մեջ։

3 Ստացվում է այնպես, որ 7-րդ դարի հեղինակը ինչ-որ պատմական-ուսումնական քարտեզ է կազմել իրենից ավելի քան երկու դար առաջ գոյություն ունեցած և իր ժամանակ այլևս գոյություն չունեցող մի պետության համար։ Այդպիսի պատմա-քաղաքական քարտեզներ հին աշխարհում չեն դժվել, մի բան, որ ընդունում է նաև պրոֆ. Երեմյանը իր ներածությունում։

Հարց է առաջանում նաև. եթե «Աշխարհացույց»-ում տրված է Մեծ Հայքը մինչև 387 թվականը, ապա այդ դեպքում ինչպիսի՞ն է եղել այդ նույն Մեծ Հայքը «Աշխարհացույց»-ի հեղինակի կարծիքով նրա կենդանության օրոք։ Այս հարցին ակադեմիկոս Երեմյանը կարծես փորձում է պատասխանել, թեև միայն մասամբ՝ տալով Մեծ Հայքի, իր կարծիքով, 387-ից հետո ստեղծված միայն հյուսիսային սահմանի մի մասը։ Ինչ վերաբերում է այդ թվականից հետո Մեծ Հայքի մյուս սահմանների, ինչպես և հյուսիսային սահմանի մյուս մասի հարցին, ապա այն ակադեմիկոս Երեմյանի կողմից բոլորովին անպատասխան է թողնված. որևէ ձևով ցույց չի տրված, թե, վերջիվերջո, այդ չարաբաստիկ 387-ից հետո «Աշխարհացույց»-ը Մեծ Հայքի մյուս երեք կողմերի ինչպիսի՞ սահմաններ է նշում։ Անհայտ է մնում, թե, ասենք, Աղձնիքը, Սյունիքը, Վասպուրականը կամ թեկուզ Այրարատը ըստ «Աշխարհացույց»-ի, նրա կազմվելու ժամանակ Մեծ Հայքի մասե՞րն են համարվել թե՞ ոչ։ Ավելին, քանի որ ընկ. Երեմյանը իր քարտեզով ասում է, որ այդ երկրամասերը Մեծ Հայքի մաս են կազմել միայն մինչև 387 թվականը, ուստի ստացվում է այնպես, որ այդ թվականից հետո նրանք Մեծ Հայքի մեջ չեն մտել։ Սա «Աշխարհացույց»-ի՝ միջնադարյան այդ անզուգական վավերագրի ոգու և տառի լուրջ անտեսում է։

Այժմ տեսնենք, թե ըստ ակադեմիկոս Երեմյանի ինչպիսիք են դարձել Մեծ Հայքի հյուսիսային սահմանները (ավելի ճիշտ, նրանց մի մասը) 387 թվականից հետո։ Այստեղ արդեն նորակազմ քարտեզում շատ որոշակի սահմաններ են տրված։ Այդ սահմանները գծված են մանուշակագույն և նրանց բացատրությունն է. «Վիրքի և Աղվանքի 387 թվականից հետո»։

Այստեղ նախ հարց է ծագում. ինչո՞ւ «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» վերնագրված քարտեզում Մեծ Հայքի հյուսիսային սահմանները կոչվում են «Վիրքի և Աղվանքի 387 թվականից հետո», չէ՞ որ գծվածը Աղվանքի և Վիրքի քարտեզ չէ։ Ավելին, ինչպե՞ս է, որ այդպես վերնագրված քարտեզում ներկայացվում են Աղվանքի ու Վիրքի բոլոր նոր սահմանները (387-ից հետո), իսկ Մեծ Հայքի՝ միայն հինը։ Մի՞թե նման բան կա «Աշխարհացույց»-ի մեջ։ Եվ ստացվել է, որ իբր ըստ «Աշխարհացույց»-ի Մեծ Հայքը գոյություն է ունեցել սոսկ մինչև 387 թվականը, իսկ Աղվանքն ու Վիրքը այդ թվականից հետո։ «Աշխարհացույց»-ի մեջ նման բանի ակնարկ անգամ չկա։

Արդ, տեսնենք, թե ակադեմիկոս Երեմյանի քարտեզում ինչպիսին է Մեծ Հայքի հյուսիսային սահմանների այն մասը, որը տարօրինակ ձևով կոչվում է «Վիրքի և Աղվանքի 387 թվականից հետո»։ Ամենից առաջ աչքի է ընկնում այն, որ այդ սահմանով «Աշխարհացույց»-ում թվարկված 15 փոքր աշխարհներից երեքը՝ Գուգարքը, Արցախը և Ուտիքը հանված են «Մեծ Հայք» երկրամասից և միացված Վիրքին ու Աղվանքին, որ նշանակում է, թե 387 թ. հետո այդ երկրամասերը այլևս չեն ըմբռնվել որպես «Մեծ Հայք» երկրի բաղկացուցիչ մասեր (մի ուրիշ սահմանագծով էլ Փայտակարանն է հանված Մեծ Հայքից)։ Ինչպես մյուս սահմանների հարցը, սա նույնպես «Աշխարհացույց»-ի ոգուն ու տառին լիովին հակառակ մի բան է։ «Աշխարհացույց»-ի վերը բերված հատվածում ավելի քան պարզ է ասված, որ Գուգարքը, Արցախը, Ուտիքը, ինչպես նաև Փայտակարանը «Աշխարհացույց»-ը գրելու ժամանակ համարվել են ոչ ավել, ոչ պակաս, քան Մեծ Հայքի փոքր աշխարհները, նրա սովորական, մշտական մասերը, մյուս 11 փոքր աշխարհների նման։

Կրկնում ենք «Աշխարհացույց»-ի բնագրից վերը բերված հատվածի այն մասը, ուր թվարկվում են այս չորս աշխարհները այս սնգամ աշխարհաբար (այնպես ինչպես թարգմանել է ինքը՝ կազմողը). «Մեծ Հայքն ունի տասնհինգ փոքր աշխարհներ, որոնք են. Բարձր Հայք, այսինքն՝ Կարնո երկիրը... տասներորդ (աշխարհ) Արցախ, որ նրան (Սյունիքի) մոտ է գտնվում, տասնմեկերորդ աշխարհ՝ Փայտակարան (համանուն) Բաղարով, գտնվում է Կասպից ծովի եզերքին, Երասխի գետաբերանին։ Տասներկուերորդը Ուտիացվոց աշխարհն է, որ սահմանակից է Աղվանքին Կուր գետով։ Տասներեքերորդ աշխարհն է Գուգարքը, որ սահմանակից է Վիրքին։ Տասնչորսերորդ աշխարհն է Տայքը, որ սահմանակից է Նգր աշխարհին...» և այլն։ Այսպիսով, «Աշխարհացույց»-ի հեղինակը ոչ միայն հիշյալ չորս աշխարհները համարում է Մեծ Հայք երկրի անքակտելի մասեր, այլ դեռ հիշեցնում էլ է, որ Գուգարքը սահմանակից է Վիրքին, կամ Վիրքի կողքին է (առ Վրօք), որ Ուտիքը սահմանակից է Աղվանքին (առ Աղուանիւք), այն էլ Կուր գետով կամ Աղվանքի կողքին է, իսկ Արցախը դրսի ոչ մի աշխարհի սահմանակից չէ, այլ գրտնվում է Սյունիքի մոտ (յերի նորա)։ Վերակազմող քարտեզագրից այստեղ մի բան էր պահանջվում՝ սահմանակից կամ կողքին ըմբռնումը նորակազմ քարտեզում տալ ճիշտ, որով և Մեծ Հայքի մաս կազմող Գուգարքը կլիներ Վիրքին, իսկ Ուտիքը՝ Աղվանքին (ձախափնյա) սոսկ սահմանակից, Արցախն էլ, իբրև Մեծ Հայքի ներքին աշխարհ դրանցից ոչ մեկին սահմանակից չէր լինի և այդ սահմանակցությունն ու ոչ սահմանակցությունը պետք է տրվեր իբրև «Աշխարհա-

ցույց»-ի ժամանակաշրջանի ըմբռնում, չսահմանափակված որևէ թվականով (387 կամ մի ուրիշ)։ Բայց ընկ. Երեմյանը այսպես չի վարվել։

Արդ, տեսնենք թե որն է նորակազմ քարտեզի մեջ տեղ գտած թյուրիմացությունների ակունքը։

«Աշխարհացույց»-ում Մեծ Հայքի 15 փոքր աշխարհների թվարկումից հետո առանձին-առանձին նկարագրվում են այդ աշխարհները, և աշխարհներից մի քանիսի նկարագրության մեջ ծանոթություն է տրվում այն մասին, թե «Աշխարհացույց»-ը կազմելու ժամանակ, այսինքն՝ պարսից տիրապետության օրոք, Մեծ Հայք երկրամասի ո՞ր մասերն են վարչականորեն կցված եղել պարսից այլ մարզերի (Ատրպատական, Վիրք, Աղվանք)։ Օրինակ, Գուգարքը որպես Մեծ Հայք երկրի անքակտելի մասերից մեկը թվարկելուց հետո, նրա առանձին գավառների նկարագրության վերջում հեղինակը տալիս է այսպիսի ծանոթություն. «ունին արդ Վիրք հաննալ ի Հայոց»։ Նման ծանոթություններ կան նաև Արցախի, Ուտիքի, Փայտակարանի նկարագրությունների վերջում։ Այդպիսի ծանոթությունները 7-րդ մարզպանական դարում, երբ մինչև Կովկասյան լեռները, ողջ Անդրկովկասում պարսից իշխանությունն էր տարածվում և այդ հողամասում չկային Հայք, Վիրք, Աղվանք, Ատրպատական կամ ուրիշ անկախ պետական միավորներ, կարող էին միայն նշանակել և նշանակել են մի բան, թե Մեծ Հայք երկրամասի այս կամ այն հատվածը պարսից իշխանությունը կցել էր իր Վիրք, Աղվանք կամ Ատրպատական վարչական միավորներին և որ չնայած վարչական սահմանագծերին այդ չորս աշխարհները միշտ էլ մնացել են Մեծ Հայք երկրի, այդ աշխարհագրական-էթնիկական հասկացողության անբաժան մասերը։ Հենց սա է «Աշխարհացույց»-ի էությունը, արժեքը և նպատակը։ Նրա հեղինակն ասում է՝ ահա Մեծ Հայքը առհասարակ՝ ապագայի հնարավոր հայկական պետության հողամասը և ապա ցույց է տալիս, թե իր օրոք ինչպիսի վարչական (պարսից) բաժանումների է ենթարկված եղել այդ երկրամասը։

Ավելորդ չէ հիշել նաև այն, որ, օրինակ, Աղվանքի նկարագրության մեջ էլ «Աշխարհացույց»-ը դարձյալ շատ որոշակի ասում է. «մեք ասասցուք զբուն աշխարհն Աղուանից, որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն»։ Այսինքն, բուն Աղվանից աշխարհի (ձախակողմյան)[4] և բուն Հայքի սահմանը «Աշխարհացույց»-ը գրելու ժամանակ համարվել է Կուր գետը։ Իսկ Վիրքի նկարագրության մեջ ասված է. «եւ մինչև զՀայոց սահմանն առ Կուր գետովն»։ Այսինքն՝ այստեղ ևս «Աշխարհացույց»-ի հեղինակը Վիրքի և Հայքի իր ժամանակի սահմանն է համարում Կուր գետը, որ մի ավելորդ անգամ նշում է Մեծ Հայքի հյուսիսային ճիշտ սահմանը և ցույց տալիս, որ «Աշխարհացույց»-ի հեղինակը հիշյալ չորս փոքր աշխարհները ըմբռնել է որպես բուն Հայքի կամ Մեծ Հայքի անխախտ մասեր։

Այլ բան է, իհարկե, թե «Աշխարհացույց»-ի հեղինակը ի՞նչ հիմք է ունեցել այդպես նկարագրելու Մեծ Հայք կոչվող երկիրը, գուցե նա սխալվել է, գուցե որևէ հիմք չի ունեցել և ընկ. Երեմյանն էլ գուցե լուրջ հիմք ունի չհամաձայնելու «Աշխարհացույց»-ի հեղինակի ըմբռնմանը, մերժելու այն։ Ինչ խոսք, գիտնականն իրավասու է ընդունել կամ մերժել այդ կարգի ըմբռնումները, սխալ համարել դրանք։ Բայց պատմական փաստաթուղթը վերականգնելիս պետք է նախ և առաջ հավատարիմ մնալ վերականգնվող փաստաթղթին, չանտեսել նրա անկյունաքարային դրույթները։ Իսկ եթե դա ինչ-որ պատճառով հնարավոր չէ, պետք է հրաժարվել նման վերականգնման գործից։ Ակադեմիկոս Երեմյանը շատ քարտեզների հեղինակ է, նրանցում այս կամ այն տեղեկությունները նա տվել է այնպես, ինչպես ինքը ճիշտ է համարել։ Բայց նույնը նա չպետք է աներ անցյալի մի վավերագրի վերականգնումը համարվող քարտեզի մեջ։

«Աշխարհացույց»-ի հիշյալ կարևորագույն դրույթի անտեսումը վերակազմված քարտեզում նաև ուրիշ անճշտությունների և հակասությունների պատճառ է դարձել։ Օրինակ, այդ քարտեզում Վիրքն ու Աղվանքը ներկայացված են սոսկ 387 թվականից հետո։ Հարց է առաջանում, իսկ ինչպիսի՞ք են այդ երկրները ըստ «Աշխարհացույց»-ի անկախ 387 կամ մի այլ թվականից։ Նորակազմ քարտեզը այդ մասին լռում է, կարծես այդ երկրները ըստ «Աշխարհացույց»-ի 387-ից առաջ չեն էլ եղել։ Մինչդեռ «Աշխարհացույց»-ի մեջ, ինչպես բոլոր նկարագրված երկրները, այնպես էլ Վիրքն ու Աղվանքը նկարագրված են ոչ այսինչ թվականից սկսած և ոչ էլ մինչև այսինչ թվականը։

Հակասական են Ս. Երեմյանի գծած նաև մի շարք այլ սահմաններ։ Օրինակ, մուգ նարնջագույն սահմանագիծը (սև կետերով) կոչվում է «338—363 թթ. ընթացքում Մեծ Հայքից անջատված երկրամասերի»։ Սակայն այդ սահմանագծերը ներփակված են «Մեծ Հայքի մինչև 387 թվա-

---

[4] Ուտիքն ու Արցախը, որ կոչվել են նաև աջակողմյան (Քռի) Աղվանք իրենց զուտ հայկական բնակչությամբ, իբրև Մեծ Հայքի մասեր միշտ էլ տարբերվել են բուն կամ ձախակողմյան Աղվանքից, որի բնակչությունն ուներ էթնիկական խառը կազմ։

կանը» կոչվող սահմանով։ Այսինքն՝ ընկ. Երեմյանը մի կողմից որոշ երկրամասեր (Փայտակարան, Ուտիք) Մեծ Հայքից հանում է «338—363 թթ. ընթացքում», իսկ մյուս կողմից այդ նույն երկրամասերը մինչև 387 թվականը թողնում Մեծ Հայքի մեջ։ Այս ակնառու հակասության պատճառը նույնպես «Աշխարհացույց»-ի վերոհիշյալ կարևորագույն դրույթի անտեսումն է։

Հարց է առաջանում, վերակազմված քարտեզի մեջ պե՞տք է արտացոլվեին «Աշխարհացույց»-ում եղած այն տեղեկությունները, որոնք ցույց են տալիս, թե այդ երկը գրելու ժամանակ ինչ վարչական ու քաղաքական սահմաններ էին անցնում Մեծ Հայքի վրայով։ Բնավ պարտադիր չէը այդ բանն արտացոլել, թեև կարելի էր նաև անել այդ միայն պահպանելով «Աշխարհացույց»-ի հիմնական դրույթները, նրա ոգին և տառը։ Ամենից առաջ անհրաժեշտ էր ճիշտ ներկայացնել Մեծ Հայքի «Աշխարհացույց»-յան ըմբռնումը։ Դրա համար նորակազմ քարտեզում այն սահմանագիծը, որ ներփակում է ըստ «Աշխարհացույց»-ի Մեծ Հայքը բաղադրող 15 փոքր աշխարհները, պետք է կոչվեր ոչ թե «Մեծ Հայքի մինչև 387 թվականը», այլ սոսկ՝ «Մեծ Հայք ըստ «Աշխարհացույց»-ի»։ Սա կլիներ այն, ինչ իրոք ասում է «Աշխարհացույց»-ը։ Այնուհետև, անհրաժեշտության դեպքում կարելի էր տարբեր սահմանագծերով ցույց տալ օտար իշխողների կողմից 4—7-րդ դարերում Մեծ Հայքի վրայով տարված վարչական և քաղաքական սահմանները, ինչպես, օրինակ, 387 թ. բոլոր բաժանումները, այդ թվում նաև Մեծ Հայքը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև բաժանող ճակատագրական սահմանը և այլն։ Թեև նման սահմաններ գծելը բոլորովին պարտադիր չէ։

Կրկնում ենք «Աշխարհացույց»-ի անկյունաքարային դրույթը, նրա էությունը այն է, որ այնտեղ նրա հեղինակը տալիս է իր ըմբռնմամբ Մեծ Հայք երկրամասը, այսինքն՝ հայ ժողովրդի հինավուրց հայրենիքի հիմնական մասը[5] և ոչ քաղաքական-պետական Հայաստան, որ չկար այն ժամանակ և ոչ էլ պատմա-քաղաքական Հայաստան, որ հակառակ էր ժամանակի գիտության ըմբռնումներին։

Ներկա հոդվածում, թերևս, անհրաժեշտություն չկա հիշատակելու մի շարք պատմական աղբյուրներ, որոնք վկայում են, որ Մեծ Հայքի ամբողջական ըմբռնումը եղել է «Աշխարհացույց»-ը կազմվելուց շատ առաջ, ինչպես նաև այդ երկը գրվելուց շատ հետո։ Եվ միշտ էլ Մեծ Հայքը ըմբռնվել է «Աշխարհացույց»-ի նշած սահմաններով, 15 աշխարհների ամբողջությամբ, անկախ այն բանից, թե ո՞ր դարերում ո՞ր հզոր պետությունների կողմից ինչպիսի վարչա-քաղաքական բաժանումների է այն ենթարկվել, ինչպես և անկախ այն բանից, թե ո՞ր դարում այդ երկրամասի որ հատվածի վրա է եղել հայկական պետականություն։

Р. А. ИШХАНЯН

ДОСАДНАЯ НЕТОЧНОСТЬ В ВАЖНОМ ИЗДАНИИ

Резюме

В статье говорится о некоторых историко-географических неточностях, нашедших место на карте академика С. Еремяна (с текстами и пояснением) «Армения по «Ашхарацуйц»-у» (Ереван, 1964).

Карта Еремяна является, по словам самого автора, опытом реконструкции на современной географической основе одной части «Ашхарацуйц»-а (средневековая армянская география), посвященной *Մեծ Հայք* (Великой Армении). Отсюда вытекает главное требование к новосозданной карте: верно отображать положения первоисточника. В статье отмечается, что в некоторых случаях карта Еремяна неверно воспроизводит текст «Ашхарацуйц»-а.

«Ашхарацуйц» был создан после утраты Арменией политической самостоятельности, армянского централизованного государства, т. е. в те времена, когда на все Закавказье распространялось персидское владычество, когда западная часть *Մեծ Հայք* была

5 Ասում ենք հիմնական, քանի որ հնում Հայաստան ասելով բացի Մեծ Հայքից հասկացել են նաև այլ հողամասեր, այդ թվում՝ Փոքր Հայքը։ Անհասկանալի է, թե ինչո՞ւ ընկ. Երեմյանը այս հանգամանքը նույնպես անտեսել է «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» կոչվող քարտեզում։ Պետք էր կամ քարտեզի անունը փոխել, կամ էլ տալ ողջ Հայաստանի քարտեզը։

присоединена к Византийской империи, а другая находилась в составе областей персидской империи. Отсюда вытекает, что автор «Ашхарацуйц»-а не мог говорить о современной ему «Великой Армении», как о самостоятельном государстве со своими политическими границами.

Մեծ Հայք в «Ашхарацуйц»-е описана как этнико-географическая единица, это как бы основная часть Армении в географическом отношении, по представлениям того времени. Автор «Ашхарацуйц»-а, описывая Մեծ Հայք, перечисляет составляющие эту страну 15 областей (малых ашхаров). По «Ашхарацуйц»-у все эти области в то время, т. е. во время создания памятника, являлись неотъемлемыми частями страны «Великой Армении».

С. Еремян же границу, охватывающую эти 15 областей, назвал «Великой Арменией до 387 года», что противоречит духу и букве «Ашхарацуйц»-а, где все эти 15 областей перечисляются как составные части Մեծ Հայք того периода. Нет ни слова о том, что четко указанные географические границы страны были таковыми лишь до 387, или до какого-либо другого года.

В «Ашхарацуйц»-е говорится также и о некоторых других частях Армении, которые при персидском владычестве административно или политически находились в составе других персидских владений, но которые по тексту «Ашхарацуйц»-а оставались неотъемлемыми частями этнико-географической единицы Մեծ Հայք.

Академик Еремян, к сожалению, не учел эту весьма важную особенность средневекового памятника и на своей карте неверно передал границы страны Մեծ Հայք, урезав некоторые ее части.